Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 11-ի N490 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 2-ի N133-Ա, 2023 թվականի մայիսի 4-ի N134-Ա - N135-Ա, 2023 թվականի մայիսի 5-ի N136-Ա, 2023 թվականի մայիսի 8-ի N137-Ա – N138-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N133-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։ Որոշման 1-ին կետում հանձնաժողովի անդամների պաշտոնները թերի են գրառված։ Որոշման նախաբանում և 2-րդ կետում ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու որոշման համարը գրառված չէ, բացի այդ որոշման 2-րդ կետում կատարված հղումը ավելորդ է։ Որոշման 5-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին։
2. N136-Ա որոշման վերնագրում «պաշտոնակատարի» բառը ավելորդ է։ Որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։ Որոշման դրույթներում առկա են կրկնվող հղումներ։ Որոշման 9-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին։
3. N137-Ա և N138-Ա որոշումների նախաբաններում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված, բացի այդ N138-Ա որոշման վերջին տողում «հասցեում» բառի փոխարեն անհրաժեշտ է գրառել «տուն» բառը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 2-ի թիվ 133-Ա որոշման վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 2-ի թիվ 133-Ա որոշման նախաբանում «35-րդ հոդվածի 1-ին» բառերից հետո լրացնել «մասի» բառը: Թիվ 133-Ա որոշման նախաբանում և որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի որոշման համարը գրառված չէ, բացի այդ որոշման 2-րդ կետում՝ պարբերությունների համարակալումը սխալ է կատարված: Որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում՝ «Տեղական տուքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին կատարված հղումը թերի է, այն է՝ նշված օրենքի համապատասխան հոդվածին, կամ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասին, հոդվածի մասի կետին կամ ենթակետին հղում կատարված չէ /հիմք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մաս/: Թիվ 133-Ա որոշման 3-րդ կետի բովանդակությունում հղում է պարունակում հավելվածին, սակայն որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածը բացակայում է /հիմք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերություն/:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

19.05.2023թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան